Հաշվետվություն
Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավարի
17.01.2012 թ.
Արձանագրություն թիվ 01

Նոյեմբերյանի ազգաբնակչության առջև հաշվետվությամբ ելույթ ունեցավ Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավար՝ Վանուշ Ամիրաղյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկատվություն քաղաքի աղբահանության վերաբերյալ
2. Տեղեկատվություն քաղաքի լուսավորվածության վերաբերյալ
3. Տեղեկատվություն Նոյեմբերյան համայնքի 2012 թ. բյուջեի մասին

Մինչ հաշվետվությամբ հանդես գալը համայնքի ղեկավարը ամանորյա շնորհավորանքի խոսքեր հղեց Նոյեմբերյանի ազգաբնակչությանը: Նրանց մաղթեց առողջություն և հաջողություններ: Այնուհետև նա խնդրանքով դիմեց այն նոյեմբերյանցիներին, ովքեր դեռևս նախկին տարիներից չեն վճարել իրենց հարկային պարտավորությունները՝ /գույքահարկ, հողի հարկ և համայնքի ավագանու կողմից սահմանված աղբահանության վարձավճար/:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ քաղաքում աղբահանությունը գտնվում է "լավ" վիճակում, սպասարկվում են բոլոր բազմաբնակարան շենքերը և քաղաքի որոշակի թաղամասեր: Նա ավելացրեց, որ այս տարի էլ ավելի կբարելավվի աղբահանության սպասարկումը և աղբահան մեքենաները կայցելեն նաև մնացած թաղամասերը:

Երկրորդ հարցի շուրջ նա հայտնեց, որ 2009 թվականի երկրորդ կիսամյակից ընդլայնվել է քաղաքի փողոցային լուսավորության ցանցը: Այն էլ ավելի կընդլայնվի և քաղաքի թաղամասերի ծայրամասերը նույնպես ապահովված կլինեն լուսավորվածությամբ /համայնքի 2012 թ. բյուջեում նախատեսված միջոցների հաշվին/:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ համայնքի ղեկավարը հայտնեց, որ 2011 թ. դեկտեմբերի 9-ի համայնքի ավագանու թիվ 84-Ն որոշմամբ հաստատվել է Նոյեմբերյանի քաղաքային համայնքի 2012 թ. բյուջեն, որով նախատեսված է որոշակի գումար՝ քաղաքի սոցիալապես անապահով խավի և նորածին երեխաների համար:

Այնուհետև համայնքի բնակիչների կողմից հնչեցին հարցադրումներ, որոնց էլ համայնքի ղեկավարի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ Ա. ԱՄԻՐԱՂՅԱՆ